

Հ.Մ.Ը.Մ.

Գայլիկ — Արծուկի

Կ
Ա
Կ
Ո
Ի
Ղ

Թ
Ա
Թ
Ի
Կ



Հ.Մ.Ը.Մ.

Քայլիկ - Արծուիկ

Կ

Ա

Կ

Ո

Ի

Ղ

Թ

Ա

Թ

Ի

Կ

ԼԻԲԱՆԱՆ - 1999

Պատրաստեց եւ խմբագրեց
Կարպիս Գապասագալեան

Օգնական խմբագիր
Լուսին Գազէզեան

**Այս գիրքը հրատարակուեցաւ
մեկննասութեամբ՝
Եղբ. Ժիրայր Սարգիսեանի**

*Վերահրատարակութեան ամէն իրաւունք վերապահուած է
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան*

սկզբունքները, օրինակելի քաղաքացիի եւ տիպար հայու կերտման զոյգ առաջադրանքներով:

Կը հաւատանք, որ այս հրատարակութիւնը մնալուն ուղեցոյցը պիտի հանդիսանայ Հ.Մ.Բ.Մ.ական սկաուտին, անբաժան ընկերակիցը ըլլայ անոր՝ հաւաքոյթներու եւ աշխատանքային հանդիպումներու ընթացքին: Սկաուտը պիտի գուրգուրայ իր գիրքին վրայ, բժախնդրօրէն գործադրէ հոն տեղ գտած վարժութիւններն ու թելադրանքները եւ, ամէնէն կարելորը, ջանք չխնայէ զանոնք գործնապէս արտայայտելու իր անմիջական շրջապատին մէջ:


Հրատարակութիւնը պատրաստուած է սկաուտական աշխատանքներու մէջ երկարամեայ փորձառութիւն ունեցող պատասխանատուներու կողմէ: Ներկայացուած նիւթերը քննուած եւ ուսումնասիրուած են համա-Հ.Մ.Բ.Մ.ական խմբապետական համագումարներուն, վերջին տարիներուն փորձարկուած են շրջաններու մէջ եւ հրատարակութեան յանձնուած՝ Սիտնիի համա-Հ.Մ.Բ.Մ.ական խմբապետական Գ. համագումարին կողմէ վերջնական վերանայումի ենթարկուելէ ետք:

Կ'ընդունինք, որ այս գործը կրնայ կատարեալ եղած չըլլալ, սակայն կը կարծենք, որ երկար պատրաստութիւններէ եւ փորձարկումներէ ետք անիկա հեռու չէ կատարեալէն եւ լաւապէս կրնայ ծառայել իր նպատակին:

Հ.Մ.Բ.Մ.Ի

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿԱԿՈՒՂ ԹԱԹԻԿ



Անուն մականուն

Ծննդ. թուական եւ վայր

Տան հասցե

Հեռախօսի թիւ

Յանախաձ վարժարան

Մուտքի թուական

Խոստման թուական

Հետաքրքրութիւններ

Ապագայի միտումներ

Ո՞Վ Է ԳԱՅԼԻԿԸ

Գայլիկը այն ըսկաուտն է, որուն տարիքը կը տարուբերի ճէն 11 տարեկանի միջեւ, ան միշտ կ'օգնէ ուրիշին եւ վստահելի է: Ան կը հագնի գայլիկական յատուկ տարազ եւ ամէն շաբաթ ներկայ կը գտնուի հաւաքոյթներուն, ուր կը սորվի ըսկաուտական, ազգային, կրօնական, բնութեան, մարզական գիտելիքներ:



ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՔՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԴ

Քու պատասխանատուների մեծ տղաք ու աղջիկներ են, որոնց անունները առնուած են The Rudyard Kiplingի The Jungle Bookէն: Աքելլան՝ մայր գայլն է, որ կը սիրէ ու կը պաշտպանէ իր գայլիկները: Պալուն (արջ) եւ Պաղիբան (յովազ)




Աքելլային օգնականներն են, որոնք գայլիկին կը սորվեցնեն գիտելիքներ, մարզանք ելն.: Այս պատասխանատուները շատ ժամանակ կը տրամադրեն պատրաստելու խաղեր, գիտելիքներ, արշաւներ, հետաքրքրական դարձնելու համար հաւաքոյթներ:

Ի՞ՆՉ Է ՎԵՑԵԱԿԸ

Վեցեակը վեց գայլիկներէ բաղկացած խմբակ մըն է, իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ իր վեցեակին գոյնը, որ կը դրուի թեւին վրայ: Վեցեակը ունի իր պետը, որ կը կոչուի վեցեակապետ, ունի օգնական մը՝ փոխ-վեցեակապետ: Վեցեակապետը ունի երկու դեղին երիզ իր ձախ ձեռքին վրայ, իսկ փոխ վեցեակապետը՝ մէկ դեղին երիզ:



ԲԱՐԻ ԵԿԱՐ
ՄԵՐ ՎՈՀՄԱԿԷՆ
ՆԵՐՍ



Այս մութ հետքը
կ'ըսէ թէ ինչ պիտի ընես

Լեցուր հետքերս երբ
գիտելիքը աւարտես

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
1.- Ծանշնալ ազգային դրօշակը	13
2.- Վոհմակին օրէնքը	16
3.- Տէրունական աղօթք	21
4.- Գայլիկին տարազը	23
5.- Հինգ յօդուածներ	25
6.- Բարեւելու ձեւերը	29
7.- Յիսուսի ծնունդը	32
8.- Հաւաքել հինգ հերոսներու նկարներ	37
9.- Վարդանանց պատերազմ	38
10.- Մոկլիին պատմութիւնը	49
11.- Երեք շրջանակները	57
12.- Նշանաբանը	59
13.- Օղակ եւ կովու կապեր	61
14.- Խոստումը	64
15.- Մեծ կանչի ձեւը	67
16.- Հետախուզական նշաններ	73
17.- Անուն, մականուն եւ հասցէ գրել	76
18.- Կօշիկ կապել, մազ սանտրել	79
19.- Վարժութիւններ	82
20.- Փողկապ կապել	85

Կակուղ թաթիկի մը փորձառական շրջանին
հսկողութիւնը եւ գիտելիքներու փոխանցումը
կը ստանձնէ վոհմակի/երամի խմբապետու-
թիւնը:



1.- ՃԱՆՉՆԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԴՐՕՇԱԿԸ

♦ Երբ դրոշակին կը բարեւես, դուն կը բարեւես նաեւ ծնողքիդ, Աստուծոյ, ազգիդ, Մայր Հայրենիքին, Արարատին, այսպէս բարեւած կ'ըլլաս դրոշակին, որովհետեւ այս բոլորը Հայաստանը կը ներկայացնեն:

Գունաւորէ՛ Ազգային դրոշակը.

○ Կարմիրը կը խորհրդանշէ մեր պապերուն թափած արիւնը:

○ Կապոյտը կը խորհրդանշէ երկինքը:

○ Նարնջագոյնը կը խորհրդանշէ մեր դաշտերը:

Գծէ՛ եւ գունաւորէ՛ բնական յերկրիդ դրօշակը.

ԳԱՅԼԵԿԻՆ ԳՐԾՇԻՆ

Փայլէ՛, փայլէ՛, ով դրօշակ
Մեր գլուխներուն վրայ համարձակ.
Ծալքերդ օդին մէջ վետովտին
Նման դալար փափուկ մարգին:

Փայլէ՛, փայլէ՛, ո՛վ դրօշակ
(4 անգամ կրկնել)

Լանջքիդ վրայ գեղադալար
Կ'ըլլան մէկ սիրտ, մէկ գաղափար.
Երկու գայլեր եղբայրօրէն
«Մեր լաւագոյնը» կը գոչեն:

Օ՛ն, լսեցէ՛ք. այս է մեր կանք
 Երբ որ սորվինք, գործենք, խաղանք.
 Ի գործ դնել լաւագոյնն մեր,
 Յարգելով միշտ խղճին պատուէր:

Միրուն դրօշակ եղիր վկայ
 Կը խոստանանք առջեւդ ահա
 Ըլլալ հնազանդ՝ միշտ Աստուծոյ
 Հայրենիքի՝ ծնողաց հաճոյ:

Փայ-լէ. փայ-լէ ով դը-րօ-շակ մեր գլուխներուն վրայն-մար- ժակ.
 ծալ- քե-րդ օղին մէջ վէտվէ- օին նը-ման դա-լար փ- փուկ մարգին
 ծալ- քե-րդ օղին մէջ վէտվէ- օին նը-ման դա- լար փ-փուկ մար-գին
 փայ- լէ փայ-լէ ով դը-րօ-շակ փայ-լէ փայ-լէ ով դը-րօ- շակ:

Թուական



Արեւլայի ստորագրութիւն



2.- ՎՈՂՄԱԿԻՆ ՕՐԷՆՔԸ

- 1.- Գայլիկը մտիկ կ'ընէ
Ծեր Գայլը
- 2.- Գայլիկը ինքզինքը
մտիկ չ'ըներ
- 3.- Գայլիկը մաքուր
հայերէն կը խօսի





1.- Գայիկը մտիկ կ'ընէ ծեր Գայլը

Այս կը նշանակէ, որ պէտք է հնազանդիս քու մեծերուդ, ո՛ր որ ալ գտնուիս, ի՛նչ պայմաններու մէջ ալ ըլլաս, նոյնիսկ եթէ հայրիկը, մայրիկը կամ Աքելլան քովդ չեն, քեզ չեն տեսներ՝ պէտք է ընես անոնց ըսածը:

2.- Գայլիկը ինքզինք մտիկ չ'ըներ

Եթէ քեզի դժուար գործ մը յանձնեն, օրինակ՝ սենեակը մաքրել, պիտի չըսես որ դժուար է, չես ուզեր կամ յոգնած ես: Մտիկ պիտի ընես Ծեր Գայլին՝ քու մեծերուդ խօսքը ու յետոյ պիտի տեսնես, թէ կարծածիդ չափ ալ դժուար չէ եղեր գործը:

3.- Գայլիկը մաքուր հայերէն կը խօսի

Պիտի խօսիս միշտ մաքո՛ւր հայերէն: Օտար բառեր, անհամ խօսքեր պիտի չգործածես բնաւ. ընկերներուդ հետ, տունը, ակումբը, դպրոցը, երբ ստիպուած չես ուրիշ լեզու մը խօսիլ, պիտի գործածես միայն հայերէնը եւ մանաւանդ մաքուր հայերէն:



Բարոյախօսութիւն

«Շնորհակալ եմ», «Ներողութիւն» բառերը միշտ լեզուիդ ծայրը թող ըլլան եւ գործածէ, երբ որ հարկը պահանջէ:

աձուկ



90



Գտի՛ր այս ձուկին
անունը,
նկարներուն
առաջին տառերը
տուփիկներուն մէջ
տեղաւորելէ ետք

Ք Ա Յ Լ Ե Ր Պ

Գայլիկներ ենք Հ.Մ.Ը.Մ.ի,
Անվեհեր, պարկեշտ ու միշտ առաքինի.

(կրկնել)

Ազգանուէր ո՛վ դուք հայ գայլիկներ
Համախմբուինք շուրջ իտեալին մեր՝
Յառաջ միշտ դէպի յառաջ,
Ըլլանք հեռատես, զոհուող ու միշտ քաջ:

(կրկնել)

ՀԻՔՔԻ ՀԻՔՔԻ

Հիքքի-հիքքի-են,

Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկները ձեզ կը բարեւեն:

Հի - ք - քի - քի - քի - քի են , հո - մեղ - մե - նի

դայ - իկ - նե - րը ձեզ կը բա - րե - նեն :

Թուական

20



Արեւայի ստորագրութիւն




3.- ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ
եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն
քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս
եւ յերկրի: Ջհաց մեր հանապազորդ
տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս
մեր, որպէս եւ մեք թողումք մերոց
պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ
ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի
չարէն: Ջի քո է արքայութիւն եւ
զօրութիւն եւ փառք յաիտեանս. Ամէն:

Բարոյախօսութիւն

*-Մարդկային շատ բնա-
կան պարպակեանքներն
է, երեկոյեան բնանալէ
առաջ ծունկի գալ եւ շնոր-
հակալ ըլլալ Աստուծոյ, որ
մեզի պարգևեց այդ օրը:*



ԿԱՆՉ

Ա.Բ. Գ. Դ. Ե. Չ. Ի. Բարի եկած էք դուք բարի:

ՊՈՒՊԱՅԻԿԱ

Պուպայիկա, Պուպայիկա պում,
Պուպայիկա պուպայիկա պում պում պում.
Զիմ պում պրա, Վիմ պում պրա,
Հ.Մ.Ը.Մ. Հուռա, հուռա, հուռա:

Պու պ յի կա, պում. պու պ յի կա, պում. պու պ յի կա. պու պ յի կա ,
պում , պում , պում . զիմ , պում , պրա , զիմ , պում , պրա . հո-մեն -ըղ-մեն
հուռ - ա , հուռ -ա , հուռ - ա :

Թուական



Արեւլայի ստորագրութիւն



4.- ԳԱՅԼԻԿԻՆ ՏԱՐԱԶԸ



*Գունաւորէ՛ տարապիւն մասերը եւ
քովը գրէ՛ ճիշդ անունները.*

♦ Տարազը պէտք է հագուիլ վոհմակին հաւաքոյթներուն ընթացքին եւ կամ որեւէ պաշտօնական ձեռնարկներու եւ այցելութիւններու ընթացքին: Տարազը պէտք է պահել մաքուր եւ կոկիկ, պէտք է կախել պահարանին մէջ, կամ զգուշութեամբ ծալել դարակին մէջ:

ՓՈՐՁԷ ԾԿՈՒՆՈՒԹԻՒՆԴ

Այս խաղը խաղալու համար երկու գայլիկներ դեմ դիմաց կը նստին գետին, կօշիկին տակը իրարու միացուցած, ձեռքերը գետին: Իւրաքանչիւրը պիտի փորձէ որոշուած սահմանէն դուրս հանել հակառակորդը՝ միայն հրելով:

ԿԱՆՉ ՄԸ

Րիբ, Րիբ, Րիբ.

Ալահիբ, ալաուբ, ալաա:

Աքին, քահին, քահին, քահա...


Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկները հոս են ահա՛:





5.- ՀԻՆԳ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

- 1.- Գայլիկը նախ ուրիշները կը մտածէ.
- 2.- Գայլիկը աչքն ու ականջը կը բանայ.
- 3.- Գայլիկը միշտ մաքուր է.
- 4.- Գայլիկը ճշմարտախօս է.
- 5.- Գայլիկը միշտ ուրախ է.



1.- Գայլիկը նախ ուրիշները կը մտածէ




Պիտի շնորհաս, որ քեզմէ առաջ ուրիշներու մասին պիտի մտածես, անձնասէր պիտի չըլլաս:

2.- Գայլիկը աչքն ու ականջը կը բանայ

Ուշադրութիւն
պիտի ընես,
պատահած
բոլոր դէպքերը
տեսնելու եւ
ըսուածները
լսելու: Արթուն
պիտի ըլլաս:





3.- Գայլիկը միշտ մաքուր է

Մաքուր մտածումով, մարմինով, խօսքով եւ գործով:

4.- Գայլիկը ճշմարտախօս է

Բերանէդ երբեք սուտ խօսք պիտի չելլէ:



5.- Գայլիկը միշտ ուրախ է

Եղի՛ր ժպտուն եւ ուրախ, չունիս պատճառներ ըլլալու տխուր եւ տրտում:

ԿԱՆՉ

Քում, քումանի, քում, աթիքում, աթիքա,
ուսթիքի, ուսթիքի, ուսթիքա, ա՛:

Պումալի քա, ա՛

Հ.Մ.Ը.Մ.ի գալլիկները

հոս են ահա՛:



Քում, ա . թա քում . ա թա քի . ա թի քա . ուս թի քի .
ուս թի քի . ուս թի քա , գումա լի քա . ա՛ հո - մենդ - մե - նի
սկո - ութ - ներ հոս են ա - հա :



Թուական

28



Արեւլայի ստորագրութիւն



6.- ԲԱՐԵՒԵԼՈՒ ՉԵՒԵՐԸ



Բարեր կու տանք աջ ձեռքով: Երկու մատները կը խորհրդանշեն գայլին ախանջները:



Երբ կը ձեռնուիս որեւէ գայլիկի հետ, աջ ձեռքով ձեռնուէ՛, ցուցամատդ պէտք է դպչի դիմացիների դաստակին:




Լման բարեր կը տրուի, պաշտօնական արարողութիւններուն, դրօշակի արարողութեան եւ երբ Աքելլային հանդիպիս:

Պաշտօնական բարեր կը գործածուի Մեծ Կանչի ժամանակ:

Երբ մեր ձեռքերը զբաղած ըլլան, դիմացիները կը բարեւենք գլխու շարժումով մը, գլուխը խոնարհելով:

ԿԱՐՄԻՐ ՉՈՒԿԸ



Պէտք ունիս.

□ Գիւնիի շիշի խցանի մը, խաւաքարտի, երկու հլունքի, կարմիր ներկի, վրձիւնի մը, դանակի մը:

□ Կտրէ՛ կափարիչը, ինչպէս նշանակուած է նկարին մէջ, ձուկին բերանը շինելու համար: Խաւաքարտին վրայ գծէ եւ յետոյ մկրատով կտրէ ձուկին պոչը եւ լողակները, ինչպէս գծուած են պատկերին մէջ (թիւ 3ը գծէ երկու անգամ): Մարմինին վրայ դանակով կտրէ պոչին եւ լողակներուն տեղերը (դանակով գիծ մը պիտի ընես): Անցուր խաւաքարտները գիծերուն մէջ, փակցուր հլունքները աչքերուն տեղը: Զուկդ ներկէ կարմիր ներկով (ջրաներկ մի գործածեր):

Երբ ներկը շորնայ, խոշոր ամանի մը մէջ ջուր լեցուր եւ ձուկդ նետէ անոր մէջ:

Կրնաս այս ձուկէն քանի մը հատ շինել, եւ զանոնք տարբեր գոյներով ներկել եւ կիսովին լեցուն թափանցիկ անօթի մը մէջ գետեղել. պիտի ունենաս գեղեցիկ զարդ մը:

Քարեւ

Ամէն առտու երբ արթննաս եւ երեկոյեան տուն մտնես պէտք է քարեւես հօրդ, մօրդ եւ ընտանեկան բոլոր պարագաներուդ: Դպրոցը պէտք է քարեւես պրն. տնօրէնին, ուսուցիչներուդ եւայլն...:

ԱՔԵԼԼԱՅԻՆ ԵՐԳԸ

Աքելլան ունէր 50 գայլիկ (3 անգամ) բոլորն ալ ճարպիկ:

(Իւրաքանչիւր անգամուն բառ մը չերգել)

(Կարելի է նաեւ երգել մեր Պալուն ըսելով)

Թուական



Աքելլայի ստորագրութիւն



7.- ՅԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՆԳԸ

Հոռմէացի կառավարիչը հրամայած էր մարդոց,- անոնց որոնք կ'ապրէին իրենց ենթակայ երկիրներուն մէջ, իրենց անունը արձանագրել տալ իրենց ծննդավայրին մէջ: Հետեւաբար, ամէն մարդ իր ծննդավայրը պէտք է երթար: Յովսէփ ալ իր կնոջ՝ Մարիամին հետ Բեթղեհէմ գնաց: Մարիամ զաւակ պիտի ունենար: Բեթղեհէմի մեծ





պանդոկները լեցուն էին եւ տեղ չկար, ուր Յովսէփ եւ Մարիամ կարենային իջեալանել: Հետեալբար, երբ Յիսուս ծնաւ, զայն դրին մսուրի մը մէջ:

Բեթղեհէմի մօտ հովիւներ կային, որոնք ամբողջ գիշերը դաշտերու մէջ կը մնային իրենց հօտին հսկելու համար: Անոնք տեսան Տիրոջ հրեշտակը եւ Աստուծոյ լոյսը՝ իրենց վերեւ եւ վախցան: Հրեշտակը ըսաւ անոնց.

«Մի՛ վախնաք, ես եկած եմ ձեզի ատենելու, թէ այսօր, Բեթղեհէմի մէջ ծնաւ որդի մը, որ երբ մեծ-

Այս պիտի փրկէ բոլոր մարդիկը: Ահաւասիկ Աստուած խօսեցաւ ձեզի՝ իմ միջոցովս: Դուք պիտի գտնէք մանուկ մը՝ պարուրուած եւ մսուրի մէջ պառկած:

Յանկարծ հովիւները տեսան խուսբ մը հրեշտակներ, որոնք Աստուած փառաբանելով՝ կ'երգէին. «Փառք ի բարձունս Աստուծոյ. խաղաղութիւն՝ երկրի վրայ եւ մարդոց մէջ հաճութիւն»: Երբ հրեշտակները երկինք բարձրացան, հովիւները իրարու ըսին. «Երթանք Բեթղեհէմ եւ տեսնենք թէ ի՞նչ պատահած է ...»:





Անոնք անմիջապէս Բեթղեհէմ գացին. հոն գտան Մարիամն ու Յովսէփը իրենց նորածինին հետ, որ մտորի մը մէջ պառկած էր: Երբ հովիւները տեսան նորածինը, գացին, մարդոց պատմեցին իրենց տեսածն ու հրեշտակին ըսածը՝ մանուկին մասին: Մարդիկ զարմանքով լսեցին հովիւներուն պատմածը:

Մարիամ յիշեց բոլոր պատահածները եւ ինկախոր մտածումի մէջ:



Հովիւները վերադարձան շարականներ երգելով եւ փառաբանելով Աստուած՝ բոլոր պատահածներուն համար: Պատահած էր ճիշդ այնպէս՝ ինչպէս հրեշտակը ըսած էր:

1.- Գունաւորէ՛ բոլոր նկարները.

Թուական

36



Արեւլայի ստորագրութիւն



8.- ՀԱՒԱՔԵԼ ՀԻՆԳ ՀԱՅ ՀԵՐՈՄՆԵՐՈՒ ՆԿԱՐՆԵՐ



.....

.....

♦ Իրաքանչիւր նկարին տակ գրէ՝ հերոսին անունն ու մականունը.



9.- ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ

Յազկերտ Բ. եւ իր ծրագիրը

Պարսկաստանի Յազկերտ Բ. թագաւորը մուկնանդ կրակապաշտ էր: Կ'ատէր քրիստոնէութիւնը եւ կ'ուզէր, որ դրացի բոլոր ժողովուրդներն ալ կրակապաշտ ըլլային: Յազկերտ կը մտածէր նաեւ, որ հայերը եթէ քրիստոնէութիւնը ուրանան եւ կրակապաշտ ըլլան, պիտի ձուլուին պարսիկներուն մէջ:

Յազկերտի այս մտածումները քաջալերողը եղաւ իր խորհրդականը՝ Միհրներսէհ, որ թէեւ ինչպիսի, բայց չար մարդ մըն էր եւ հակառակ էր քրիստոնէութեան:

Միհրներսէհի խորհուրդով, Յազկերտ նամակ մը գրեց հայոց Կաթողիկոսին եւ մեծամեծներուն յայտնելով, թէ քրիստոնէութիւնը սուտ եւ անպէտք կրօնք մըն է, իսկ պարսից կրօնքը՝ ճշմարիտ է: Յազկերտ, իր նամակով Կաթողիկոսին եւ իշխաններուն առաջարկեց, որ անմիջապէս ուրանան քրիստոնէութիւնը եւ դառնան կրակապաշտ:

Հայոց Կաթողիկոսը, երբ ստացաւ Յազկերտի նամակը, Արտաշատի մէջ ժողով մը գումարեց:



Այդ ժողովին ներկայ էին հայ կղերականներն ու նախարարները: Բոլորն ալ զայրացան, երբ Յազկերտի նամակը կարդացին: Հասկցան Յազկերտի միտքը,- ան կ'ուզէր քրիստոնէութիւնը ջնջել Հայաստանէն, որպէսզի այս ձեռով հայ ժողովուրդը ձուլէ պարսիկներուն մէջ:

Այդ ժողովը նամակով մը պատասխանեց Յազկերտին: Հայ նախարարները արքայից արքային գրեցին, թէ իրենք պարսիկներուն դէմ չեն, կը յարգեն թագաւորն ու իր ժողովուրդը, բայց չեն կրնար ուրանալ քրիստոնէութիւնը, կ'ուզեն քրիստոնէայ մնալ եւ բարեկամ ըլլալ պարսիկ ժողովուրդին:

Հայերու գրած նամակը այսպէս կը վերջանար.

«Այս հաւատքէն ո'չ ոք կրնայ մեզ հեռացնել, ո'չ մարդիկ, ո'չ հուր եւ ո'չ սուր ...»:

Յազկերտ զայրացաւ երբ ստացաւ հայերու նամակը. հրամայեց, որ հայ նախարարները շուտով Տիգրոն գան՝ բացատրութիւն տալու:

Նախարարները գացին: Յազկերտ սպառնաց անոնց, որ եթէ անմիջապէս չուրանան քրիստոնէութիւնը եւ կրակապաշտ չըլլան, աքսորել պիտի տայ զիրենք եւ պիտի աւերէ Հայաստանը:

Նախարարները տեսան, որ եթէ իրենք աքսոր-

ւին, Հայաստանը անտէր պիտի մնայ եւ Յազկերտ իր ուզածը պիտի կարողանայ ընել:

Մտածեցին եւ որոշեցին երեսանց ուրանալ քրիստոնէութիւնը, վերադառնալ Հայաստան՝ կարգադրութիւններ ընելու համար:

Տիգրոն գացած եւ ակամայ ու երեսանց քրիստոնէութիւնը ուրացող իշխաններէն մէկն էր նա եւ հայոց բանակներուն սպարապետը՝ Վարդան Մամիկոնեան:

Վարդան Մամիկոնեան կը տանջուէր, իր խիղճը հանգիստ չէր, որովհետեւ թէեւ առ երես, բայց վերջապէս ուրացած էր ճշմարիտ հաւատքը: Այդ պատճառով ալ, իր ընկերներուն հետ կ'անապարէր Հայաստան հասնիլ եւ կատարել իր պարտականութիւնը՝ իր կրօնքին եւ հայրենիքին հանդէպ:

Նախարարները, Հայաստան վերադառնալէ ետք, երկրորդ ժողով մը գումարեցին, երդում ըրին խաչի եւ Աւետարանի վրայ, որ մինչեւ մահ հաւատարիմ պիտի մնան իրենց կրօնքին եւ հայրենիքին:

Այս ժողովէն բացակայ էր Վասակ Սիւնի: Անոր ալ յայտնեցին ժողովին որոշումը: Վասակ համաձայն գտնուեցաւ որոշումին եւ ինք ալ խաչի ու



Աւետարանի վրայ ուխտեց հաւատարիմ մնալ
կրօնքին ու հայրենիքին մինչեւ մահ:

Վասակ Սիւնի, Հայաստանի մարզպանը, որ
փառասէր մէկն էր, կը փափաքէր պարսիկներու
օգնութեամբ թագաւոր ըլլալ:

Վարդան Մամիկոնեան, հայոց բանակին սպա-
րապետը, կարգի դրաւ իր զինուորները եւ առա-
ջին անգամ յարձակեցաւ Հայաստան գտնուող
պարսիկ գունդերուն վրայ եւ փախցուց զանոնք
մեր երկրէն:

Այն ատեն, երբ Հայաստանի մէջ պատրաստութիւններ կը տեսնուէին դէմ դնելու համար պարսիկներուն, պաշտպանելու համար կրօնքն ու հայրենիքը, լուր եկաւ Վարդանի, թէ պարսից բանակը մտած է աղուանից աշխարհը, կը քանդէ եկեղեցիները եւ անոնց տեղ ատրուշաններ կը կանգնէ:

Այս միջոցին Վարդան լսեց, որ Վասակ դրժած է իր ուխտը եւ իր շուրջ հաւաքելով կարգ մը մարդիկ կը գործէ պարսիկներուն հետ: Վարդան անմիջապէս վերադարձաւ Հայաստան եւ սկսաւ պատրաստութիւններ տեսնել: Վստահ էր, որ պարսիկները ուշ կամ կանուխ պիտի յարձակէին Հայաստանի վրայ:

Վարդան սխալած չէր, Զատկուան օրերէն քիչ ետք, Յազկերտ մեծ բանակով մը հասաւ Հեր եւ Զարեանդ գաւառներ, որոնք կը գտնուէին հայ եւ պարսիկ սահմանագլուխին վրայ:

Հայ բանակը, թիով 66.000 հոգի, հաւաքուեցաւ Տղմուտ գետին եզերքը, Աւարայր դաշտին վրայ: Հայոց բանակին մէջ էին Յովսէփ Կաթողիկոսը, Ղեւոնդ Երէցը, բազմաթիւ եկեղեցականներ եւ ուխտապահ բոլոր նախարարները՝ իրենց գունդերով:

Առաւօտեան Ս. Պատարագ մատուցուցաւ, բոլորը խոստովանեցան եւ հաղորդութիւն առին: Հայրենասիրական ճառեր արտասանեցին Ղեւտոնդ Երէց եւ սպարապետ Վարդան Մամիկոնեան:

Պատերազմը յանկարծ սկսաւ, գետին երկու կողմերէն նետեր տեղացին: Վարդանի գունդը անցաւ Տղմուտի միւս ափը եւ մտաւ պարսիկներուն մէջ. թշնամին սկսաւ փախչիլ: Այդ միջոցին հայոց գունդին մէկ մասը թուլցաւ եւ սկսաւ նահանջել: Պարսիկները սիրտ առին, փիղերով յարձակեցան ու շրջապատեցին Վարդանի գունդը: Կոհիւր կատաղի եղաւ: Վարդան եւ ընկերները կոուեցան մինչեւ իրենց վերջին շունչը:

Աւարայրի ճակատամարտին, Վարդանի հետ հերոսաբար նահատակուեցան Խորէն Խոռխոռունի, Վահան Գնունի, Հմայեակ Դիմաքսեան, Գարեգին Սրուանձտեան, Արշակ Պալունի եւ ուրիշներ: Հայ նահատակներուն թիւն էր 1036, պարսիկներէն մեռան 3544 հոգի:

Վարդանի եւ իր ընկերներուն մահով պարսիկները իրենց նպատակին չհասան սակայն. հայոց մնացած գունդերը քաշուեցան երկրին ներսերը եւ շարունակեցին կոհիւր: Միւս կողմէ մեր բարե-

կամ հոգները յարձակեցան Պարսկաստանի վրայ:

Այս կոհուները երկար տեւեցին. Յազկերտ յուսահատած հրամայեց, որ եկեղեցիները բացուին եւ հայերը նախկին ձեռով հետեւին իրենց կրօնքին. միայն կարգ մը կղերականներ եւ նախարարներ Պարսկաստան տարուեցան:

Յովսէփ Կաթողիկոսը, Ղեւոնդ Երէցը եւ ուրիշ 7 եկեղեցականներ ստիպեցին, որ ուրանան քրիստոնէութիւնը եւ, երբ անոնք հաստատ մնացին իրենց հաւատքին մէջ, նահատակուեցան: Այս նահատակները կը կոչուին Ղեւոնդեանք: Հայոց Եկեղեցին, ամէն տարի, Բարեկենդանի Երեքշաբթի օրը կը տօնէ Ղեւոնդեանք յիշատակը. իսկ Վարդանի եւ Աւարայրի դաշտին վրայ ինկած իր ընկերներուն յիշատակը կը տօնէ Բարեկենդանի Հինգշաբթի օրը:

Վասակ պաշտօնանկ եղաւ, բանտարկուեցաւ եւ բանտին մէջ մեռաւ:

Աւարայրի ճակատամարտը տեղի ունեցաւ 451 թուականին:

Վարդան եւ իր ընկերները իրենց նահատակութեամբ փրկեցին հայրենիքը, ազգը եւ եկեղեցին:

ՎԱՐԳԱՆԱՆՅ ԵՐԳԵՐ

ԵՐԳ ՎԱՐԳԱՆԱՅ

Լոեց: Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին:

Մնացի մենակ, ոգիս վրդոված,
Ձեռքերս ծոցիս, գլուխս քարշ արած:

Եւ այնուհետեւ ամէն իրիկուն:
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նրա տխրամած դէմքը նայելիս,
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:

Ա՛խ, ցոլա՛, փայլէ՛, տխրադէմ լուսին,
Գուցէ քո փայլից փայլ տաս եւ Հային:

Պատմէ շատերուն Վարդանի մահը,
Կամ ի՛նչպէս կորաւ հայ ազգի գահը,
Կամ ի՛նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը, - աշխարհն Հայաստան:

ՎԱՐԴԱՆ

Իմ Հայրենեաց հոգի Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան,
Որ Տըղմուտի ասիերի քով,
Վաթսուն հազար կտրիճներով,
Զարկիր, զարկուար, ինկար քաջ-քաջ,
Պարսիկ սըփոած ի ձախդ ու յաջ:

Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան:

Աւետարանն ու խաչն առիր,
Տարիր յերկինս բարձրացուցիր,
Եւ դու ալ յետ թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տըրիր,
Որ հայրենեաց շողայ արեւ,
Շաւարշանայ դաշտին վերեւ:

Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան:

Արիւնդ կարմիր, կարմիր թափուաւ,
Դաշտն ու ծաղիկ ներկուեցաւ,
Լուսնակն ելաւ ամպի տակից,
Պաղ-պաղ թափեց ցօղիկն յաշից,
Որ հայրենեաց վարդեր բացուին,
Երգէ պլպուլն դրախտի սարին:

Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան:



Թուական

48



Արեւլայի ստորագրութիւն



10.- ՄՈԿԼԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շատ հին ժամանակ,
փայտահատ մը եւ իր
ընտանիքը Հնդկաստանի
մեծ անտառներէն մէկուն
մէջ կը գտնուէին: Խոշոր,
կաղ եւ մարդակեր շար
վագր մըն (Շերքան) ալ կը
պտըտէր հոն եւ որս կը
փնտռէր: Փայտահատը



կրակ մը վառած էր եւ տղան՝ պզտիկ Նաթուն կը
խաղար գետինը, քարերուն հետ:

Վագրը կը մօտենայ կամաց-կամաց եւ կ'ուզէ
պզտիկը փախցնել: Բայց
այրած կոնդի մը վրան կը
կոխէ եւ ցաւէն կը մոնչէ:
Ասոր վրայ փայտահատն ու
կինը կը սթափին: Վագրը կը
ստիպուի փախչիլ:



Գիշերը, գայլերու ընտա-
նիք մը կը տեսնէ Նաթուն, եւ
հայր գայլը զայն իրենց որջը

կը տանի: Հոն պզտիկը կը խաղայ գայլի ձագերուն հետ եւ անոնց թաթերուն փուշերը կը հանէ:

Քիչ վերջը, վագրը, շնագայլին (Թապաքի) առաջնորդութեամբ, կու գայ գայլերուն որջը եւ Նաթուն կը պահանջէ:

- Որսս կ'ուզեմ: Մարդու պզտիկ մը հոս եկած է, ինձի տուէ՛ք:


- Գայլերը ազատ ժողովուրդ մըն են, կը պատասխանէ հայր գայլը: Իրենց հրահանգները կը ստանան միայն Աքելլայէն, ոչ թէ քեզի պէս եզ սպաննողէ

մը: Մարդու պզտիկը մերն է:

Վագրը կը ջղայնանայ եւ գէշ խօսքեր կ'ըսէ

գայլերուն: Այն ատեն մայր գայլը կը պոռայ անոր երեսին.

- Ե՛ս եմ, Ռաքշան (սատանա), քեզի խօսողը: Մարդու պզտիկը ի՛մս է, ի՛մս: Ան պիտի չսպան-



նրի բնաւ. պիտի ապրի, պիտի վազէ ու որսայ վոհմակին հետ: Եւ ուշադրութիւն ըրէ՛, պզտիկներու որսորդ, պիտի որսայ նաեւ քեզ: Իսկ հիմա, ե՛լ հոսկէ, կորսուէ՛ ...:

Վոհմակին օրէնքը կը պահանջէ, որ նոր ծնած պզտիկները ներկայացուին լիալուսնի ժողովին: Հոն բոլորը կը քննեն նորերը ու եթէ պատահի որ չհամաձայնին, պէտք է երկու հոգի նորեկին կողմէ խօսին:

Հայր գայլը եւ մայր գայլը երբ իրենց ձագերը կը տանին ժողովի, Նաթուն ալ կ'առնեն իրենց հետ: Արդէն անունը փոխած էր մոկլիի:

Բայց անգութ վագրը կու գայ վոհմակի ժողովին, մոկլին օգնութիւն կը պահանջէ: Պզտիկը կ'ազատի արջին ու յովազին շնորհիւ: Արջը՝ գայլիկներու դաստիարակը, խօսք կու տայ կրթել մոկլին, իսկ յովազը՝ որսորդութիւն սորվեցնել անոր, եւ նոր սպաննուած ցուլ մը կու տայ գայլերուն մոկլիին փոխարէն:

Մարդու պզտիկը՝ մոկլին, գայլերուն մէջ կը մնայ անոնց լեզուն կը սորվի, կը խաղայ, որսի կ'երթայ անոնց հետ, մինչեւ 10-12 տարեկան:

Երգե՛լ:

◆ Մոկլիին օր մը կ'արշաւէր
տեսաւ շատ շուներ: (կենդանիներ)

Այս կողմէն հաու, հաու,
այդ կողմէն հաու, հաու,
հոս՝ հաու, հոն՝ հաու,
ամէն կողմէն հաու հաու:

□ Ծարունակաբար՝ տեսաւ՝ կատուներ,
բաղեր, կովեր, ձիեր, էջեր եւայլն:

◆ Իրաքանչիւր կենդանիի ձայնը
նմանողութեամբ շարունակել երգել:

Մօկ-լիին օր մը կ'ար-շա -ւէր տես-աւ շատ շու-ներ

Մօկ-լիին օր մը կ'ար-շա -ւէր տես-աւ շատ շու-ներ

այս կող-մէն հաու հաու, այն կող-մէն հաու հաու, հոս հաու, հոն հաու.

ա-մէն կողմէն հաու հաու:

Գծէ՛ Մոկլիիին պատմութիւնը.

Գծէ՛ Մոկլիիին տեսած կենդանիները.

❑ **Վարժութիւն**

Խաղին օրէնքը: Երկու գայլիկ, իւրաքանչիւրին



գլխուն անցընել թուղթէ տոպրակ մը մինչեւ ականջները, իւրաքանչիւրին ձեռքը թերթ մը պիտի ըլլայ եւ փորձէ հակառակորդին գլուխէն տոպրակը ձգել:

❑ **Խաղ**

Կէտերը իրարու միացուր թիւի շարքով յետոյ գունաւորէ:



□ Երգ

Օր մը Շերքան ու Թապագին

Ուզեցին կաշկանդել Մոկլին:

Մոկլի զա՛րկ աչ ձեռքով.


(աչ ձեռքով կը սկսին զարնել ոտքին)

Մոկլի զա՛րկ ձախ ձեռքով.

(գոյգ ձեռքերով զարնել ոտքին)

յաջորդաբար՝ աչ ոտքով, ձախ ոտքով,

ուսերով, մարմինով, գլուխով, լեզուով:



Թուական



Արեւայի ստորագրութիւն



11.- ԵՐԵՔ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Մոկլիի պատմության մեջ երբ գայլերը հաւաքւեին, Աքելլան կը պառկէր ժայռի մը վրայ եւ գայլերը շրջանակ կը կազմէին այդ ժայռին բոլորտիքը:

Մեր վոհմակներուն մէջ ալ նոյնն է ձեռք: Ժայռին տեղը կը գծենք երեք մեթր տրամագիծով շրջանակ մը, որուն մէջտեղը կը գետեղուի թոթեմը: Ասոր կ'ըսենք ժայռի շրջանակ:

Խորհուրդի շրջանակը.- աւելի մեծ է, այս շրջանակին մէջ կը շարուին գայլիկները: Անոր մեծութիւնը կախում կ'ունենայ գայլիկներու թիւէն: Հարկ է որ անոր տրամագիծը հինգ մեթրէն պակաս չըլլայ:

Զօրահանդէսի շրջանակը.- աւելի մեծ է եւ տասնհինգ մեթրէն պակաս տրամագիծ չ'ունենար: Խորհուրդի շրջանակը Աքելլան լսելու համար է, իսկ զօրահանդէսինը՝ հաւաքոյթներու, պարերու եւ Մեծ Կանչի համար կը գործածուի:



ԳԻՄԻ ԽԱՂ

Այս նկարները լաւ դիտէ. յետոյ գիրքը գոցէ՝
ու նայէ՝ թէ քանի՞ հատը կը յիշես.



ԿԱՆՉ

Պիա, Պիա, Պիա-էն,
Սիա, Սիա, Սիա-էն,
Պիա-էն, Սիա-էն,

Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկները ձեզ կը բարեւեն:

Թուական

58



Արեւլայի ստորագրութիւն



12.- ՆՇԱՆԱԲԱՆԸ

Գայլիկին նշանաբանն է «Լաւագոյնը», որ կը նշանակէ.-

♦ Երբ խաղ խաղաս, ըրէ՛ լաւագոյնդ որպէսզի խումբդ շահի:

♦ Դասարանին մէջ լաւագոյնդ մըտիկ ըրէ՛, որպէսզի

լաւ ըմբռնես ուսուցիչին բացատրածը եւ միշտ առաջին մնաս:

♦ Վոհմակին մէջ, լաւագոյնդ ըրէ որպէսզի վոհմակը առաջ տանիս:




ԽԱՂ

Երկու գայլիկներ կրոնակ կոնակի տուած, արմուկները իրարու անցած, իրաքանջիւրը պիտի փորձէ իր խումբին քովը տանիլ: Միայն հրելը արտօնուած է:



Հետեւէ՛ կէտերուն




Թուական



Արեւլայի ստորագրութիւն



13.- ՕՂԱԿ ԵՒ ԿՈՎՈՒ ԿԱՊԵՐ





Օղակ կապ: Օղակ կապը կը գործածուի երկու հաւասար հաստատ շուաններ կապելու:




Կովու կապ: Կոյր հանգոյցի պէս է:

Կապերը շատ կարեւոր են սկառուտական մեր կեանքէն ներս, կրնաս անոնցմով ձեռային աշխատանքներ ընել, մանաւանդ բանակումի ընթացքին:



Տարեդարձի մը երթալը շատ հաճելի է, իսկ
աւելի հաճելի պիտի ըլլայ երբ քու ձեռքովդ
շինուած նուէր մը տանիս ընկերոջդ:

*Ահա քեզի օրինակ մը.-
Թիթեղէ որեւէ տուփ մը
(գովացուցիչի) շուրջը խէժ
քսէ, ապա բարակ պարանով
պատէ զինք, կ'ունենաս
մատիտներ դնելիք տուփ մը,
վրան կրնաս գունաւորել,
խաւաքարտներով զարդարել
(ծաղիկ, թիթեռնիկ, եւայլն):
Գործածէ երեւակայութիւնդ:*



□ *Երգ*

Աքլոր Աղբար

Աքլոր աղբարը մեներ է,

Աքլոր աղբարը մեներ է,


Ա՛յ պիտի չերգէ քոքքոտի քոքքոտա,

Ա՛յ պիտի չերգէ քոքքոտի քոքքոտա,

Քոքքոտի քոտի քոտի քոտա,

Քոքքոտի քոտի քոտի քոտա:

Կրնա՞ս օգնել մկնիկին որ իր տնակը հասնի.



Թուական



Արելլայի ստորագրություն



14.- ԽՈՍՏՈՒՄԸ

«Կը խոստանամ ընել կարելիս՝
 հաւատարիմ ըլլալու համար
 Աստուծոյ, հայրենիքիս, ծնողքիս եւ
 վոհմակի (երամի) օրէնքին:
 Գործել բարիք մը ամէն օր»:

ԱՄԲՈՂՋԱՅՈՒՐ

Ես..... կը խոստանամ ընել կարելիս
 հաւատարիմ ըլլալու համար.....,
,,
 եւ.....: Գործել
 բարիք մը ամէն օր:


■ Հաւատարիմ ըլլալ Աստուծոյ՝
 Կը նշանակէ սիրել Աստուած,
 Անոր մասին մտածել միշտ,
 ամէն օր աղօթել եւ բարի ըլլալ:



■ Նաեւ հաւատարիմ ըլլաս հայրենիքիդ, ծնողքիդ եւ վոհմակի (երամի) օրէնքին:

Այսինքն՝ սիրես հայերէնը, հայոց պատմութիւնը եւ երբեք չմոռնաս մեր հայրենիքը՝ Հայաստանը: Սիրես նաեւ հայրիկը, մայրիկը ըլլաս հնազանդ ու բարի զաւակ, մի մոռնար այս բոլորէն վերջ՝ ամէն օր բարիք մը գործել:

Ուրիշին ծառայութիւն ընելու շատ ձեւեր կան, օրինակ կրնաս մայրիկին օգնել, ծերուկի մը բեռը տանիլ, կրնաս ամէն օր մէկ բարիք գործել, բայց յիշէ որ ինչ ալ ընես, փոխարէնը ակնկալութիւն պիտի չունենաս:



Բարոյախօսութիւն՝

ՏՈՒՆԷՆ ԴՈՒՐՍ

Տունէն պիտի ելլես մաքուր ու կոկիկ հագուած:
Քալած ժամանակ մարմինդ շիտակ բռնէ: Միշտ
առջեւ դիտէ ու քալէ:

Իրաւունք չունիս ճամբան պոռալու, կանչելու
եւ ուրիշները խանգարելու:

Ճամբան բարեւէ ծանօթներու եւ բարեկամներու:

Դռներու զանգերը մի հնչեցներ զուարճանալու
համար:

Օգնէ ծերունիներուն, որոնք փողոցը անցնիլ
կ'ուզեն:

ԳՈՐԾ ԳԱՅԼԻՆ ԵՒՎԷ

Եղէգնադաշտին խորերէն,

Կը լսէ՞ք գայլը,

Կանչելով շրջանակի բոլոր գայլերը,

Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ բոլոր գայլերը:

(կրկնել)

(Երգել.- Dans la jungle profondeի եղանակով)

Թուական



Արեւլայի ստորագրութիւն



15.- ՄԵԾ ԿԱՆՉԻ ՉԵՒԸ

Գիտե՞ս ինչ կ'ընեն շրջանակ կազմած գայլերը: Երբ ծեր գայլը՝ Աքելլան, ելլեր ժայռին վրայ, կը բարձրացնեն իրենց գլուխները եւ կ'ոռնային, բարի գալուստ մաղթելու համար անոր:



Մարդէ գայլերն ալ՝ Գայլիկները, նոյնը կ'ընեն: Երբ Աքելլան մտնէ շրջանակէն ներս, անմիջապէս կը ցատկեն եւ կը պոպոզին ոտքի մատներուն վրայ, ձեռքերը գետին՝ իրարմէ հեռացած ծունկերուն մէջէն, բարեւի ձեռով երկու մատները իրարու միացած: Ծիշդ վերի նկարին պէս:

Յետոյ, երբ Աքելլան բարեւ թոթեմը, բոլոր գայլիկները միասին կը պոռան.



Ա՛քե՛լլա՛, մեր լաւագոյնը:

Այսպիսով ըսել կ'ուզեն, որ պատրաստ են իրենց լաւագոյնը ընելու, Աքելլային խօսքերը մտիկ ընելու համար: Աքելլա բառին առաջին երկու վանկերը պէտք է երկար ըլլան եւ վերջինը՝ կտրուկ: Իսկ մեր լաւագոյնը

կը պէտք է ըսուի աւելի արագ:

Յետոյ գայլիկները կը ցատկեն ոտքի եւ կը կանգնին պատրաստ դիրքի մէջ, երկու ձեռքով բարեւելով, մատները գոց:



Ծիշդ նոյն ատեն վարիշ վեցեակապետ մը կը պոռայ.

Ձեր լա՛ւա՛գո՛յնը, երկարելով բոլոր վանկերը, բացի վերջինէն:

Եւ գայլիկները վար կ'առնեն իրենց ձախ ձեռքը ու միայն աջով բարեւելով կը պատասխանեն.

Այո՛...ո՛, մեր լաւագոյնը:



Յետոյ վար կ'առնեն իրենց աջ ձեռքն ալ եւ կը սպասեն հրահանգի:

Լա՛ւ, ի՞նչ իմաստ ունի Մեծ-Կանչը, ինչո՞ւ պատօնական բարեւի ժամանակ երկու ձեռքով կը բարեւեն գայլիկները:

Մեծ կանչը ընելով, Գայլիկները բարի եկար կ'ըսեն իրենց պետին, բարեւ կ'ըսեն նաեւ աշխարհի բոլո՛ր գայլիկներուն: Իսկ երկու ձեռքով բարեւն ալ կը նշանակէ, որ գայլիկը իր լաւագոյնը կ'ընէ երկու ձեռքով ու ամբողջ հոգիով եւ երկու աւկանջով մտիկ կ'ընէ Աքելլան:

Մեծ կանչին տետղութեան պէտք է մնաս միշտ պատրաստ դիրքի մէջ, իսկ երբ լսես՝

«Գա՛յլ»

Հրահանգը: Ասիկա կը նշանակէ «պատրաստ եւ լուռ կեցի՛ր»: Իսկ երբ լսես՝

«Գա՛յլ, Գա՛յլ, Գա՛յլ»

Կանչը, հաւաքուելու կանչն է, ի՛նչ գործի վրայ որ ըլլաս, պիտի վազես Աքելլային քով ու պոռաս մինչեւ հասնիլդ.

«Գա՛... ա՛յլ...».

Միայն պետերը իրաւունք ունին այս ձեռով կանչելու գայլիկները, իսկ վեցեակապետ մը կամ փոխ-վեցեակապետ մը կրնայ իր վեցեակի գոյնով, օրինակ՝ սեւ, ճերմակ, սրճագոյն, կանչել իր վեցեակին գայլիկները:

ՄԵԾ ԿԱՆՉԻ ԵՐԳԸ

Գայլիկներ Հ.Մ.Ը.Մ.ի,
Օ՛ն, վազեցեք շարքի,
Շրջանակի կենալու,
Մեծ կանչը ընելու
Աքելա, մեր լաւագոյնը
Հո՛ւ, հո՛ւ, մեր լաւագոյնը,
Աքելա, մեր լաւագոյնը,
Հո՛ւ, հո՛ւ լաւագոյնը:

Գայ-լիկ-ներ շո ՄննդՄե-նի օն վա - զե - ցեք շար - քի
շըր- շա - նա - կի կե - նա - լու մի կան - չը ը - նե - լու
ա - քել - լա մեր լա -ւա -գոյ-նը հու հու մեր լա-ւա գոյ-նը
ա - քել - լա մեր լա -ւա -գոյ-նը հու հու լա -ւա-գոյ - նը:

Այս ձեռային աշխատանքին համար ո՛չ թուղթի պէտք ունիս, ոչ ալ ներկի, այլ աշնանային պտուղներու:

Մարմնին համար, կրնաս գործածել

խնձորը, իսկ գլխուն համար՝ աւելի պզտիկ խնձոր մը:

Եթէ չգտար յարմար խնձոր մը, կրնաս

նաեւ գործածել փինկ-փոնկի գնդակ մը, որուն վրայ պիտի գծես աչքերը, քիթը եւ բերանը:

Իսկ եթէ գտար յարմար խնձորներ, քիթին համար, կրնաս օգտագործել նուշ, իսկ աչքերուն համար՝ չամիչ:

Գլխուն երկու կողմերէն ամրացուր բամպակէ մօրուքը՝ պզտիկ փայտիկներով, որոնց վրայ փաթած պիտի ըլլաք բամպակը եւ կը խրէք զանոնք խնձորին մէջ: Գլխարկի պարագային, եթէ կ'ուզես կրնաս թուղթ օգտագործել: Այս խնձորէ մարդուկէն զատ, կրնաս նաեւ շինել խնձորէ պուպրիկ մը: Անշուշտ, անոնց համար մօրուք պէտք չկայ, բայց անոր համար կրնաս գլխու կապոց մը շինել:



Ի՞նչ ծաղիկներ են ասոնք.

1.- Աշնուշ

2.- Ակշկա

3.- Ավդր

4.- Ամկիյա

5.- Ջղձնկիծ



Թուական


72




Արեւլայի ստորագրութիւն



16.- ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ




Ուղղութիւն - կը գործածուի իւրաքանչիւր 60-70 քայլի վրայ, ցոյց տալու համար այն ճամբան, ուր կէկ'ուզենք երթալ:




Անել ճամբայ - կը գործածուի երկու ճամբաներու առջեւ գտնուելու պարագային եւ նշանը կը դրուի սկիզբը այն ճամբուն, որ շենք ուզեր երթալ:



Չուր - կը գործածուի երբ մօտերը ջուր կայ:






Վտանգը - կը դրուի վտանգաւոր շրջանի մը մէջ, որպէսզի գայլիկը զգոյշ ըլլայ:



Վերադարձ - խումբը կամ վոհմակը որոշ յառաջացումէ մը ետք, վերադառնալու պահուն այս նշանը կը դնէ:

Կէտերուն վրայէն անցիր գունաւոր ներկերով

Գտի՛ր այն կենդանին որ այս խումբին մաս չի
կապմեր եւ ըսէ ինչն՞ւ.



Ընկերոջդ նամակ մը գրէ անտեսանելի մելանով: Մելանը շինելու համար պէտք ունիս կաթի կամ կիտրոնի հիւթի (լիմոնի հիւթը), որպէս մատիտ գործածէ ատամնակրկիտ.

Գրէ նամակդ.



կամ



Յակոբ
վաղը եկուր
դաս սորվինք
Արմէն



Երբ անտեսանելի մելանը չորնայ, դուն բան չես տեսներ թուղթին վրայ, բայց երբ լոյսին վրայ դնես, լոյսին տաքութիւնը քու գրած գիրերդ պիտի դարձնէ բաց սրճագոյնի, ինչ որ ընկերդ պիտի կարենայ կարդալ քու գաղտնի նամակդ:

Թուական



Արեւլայի ստորագրութիւն



17.- ԱՆՈՒՆ ՄԱԿԱՆՈՒՆ ԵՒ ՀԱՍՑԷ ԳՐԵԼ

Գայլիկի մը համար ամօթ է անունը, մականունը գրել շփոթնալը: Պէտք է նաեւ գիտնաս տանդ հասցէն գրել:

Ի՞նչ է հասցէն:

Կը տեսնես միշտ, հայրիկը կամ մայրիկը նամակ կը ստանան: Ձեր հասցէն պահարանին լայն կողմը գրուածն է, այսինքն անուն մականուն, թաղին անունը, շէնքին անունը եւ թիւը, եւ վերջապէս ապրած երկրիդ անունը:

Փորձէ հասցէդ գրել այս պահարանին վրայ:

TRAIN SONG

(To tune of "Yankee Doodle")

I met an engine on a hill,
All hot and broken - hearted,
And this is what he said to me
As up the hill he started:

(Slowly)

I think I can, I think I can,
At any rate I'll try.
I think I can, I think I can,
At any rate I'll try.

He reached the top, and looking back
To where he stood and doubted,
He started on the downward track
And this is what he shouted:

(Faster)




I knew I could, I knew I could,
I never should have doubted.
I knew I could, I knew I could,
I never should have doubted.

Ժամանց

Ինչպէս գծել, գայլ, արջ եւ առիծ.

Գայլին համար գծէ ադամանդի կտորի մը ձեւը, իսկ կլոր՝ արջին եւ առիծին համար:

Ապա աւելցուր գիծերը ինչպէս որ վարը գծուած են:



Թուական




Արեւլայի ստորագրութիւն



18.- ԿՕՇԻԿ ԿԱՊԵԼ, ՄԱՁ ՍԱՆՏՐԵԼ


Կան գայլիկներ, որոնք իրենց կօշիկին կապը կապել կամ իրենց մազերը սանտրելու համար կ'երթան մայրիկին: Եթե դուն ալ կ'երթայիր մինչև հիմա այլևս պիտի չերթաս, եթե ուշադրութեամբ հետեւիս վարի նկարին եւ փորձես քու կօշիկիդ կապերը կապել՝ անպայման պիտի յաջողիս:



Պահուած պատկերներ

Այս խոշոր պատկերին մէջ կան պահուած 9 փոքր պատկերներ: Անոնք են.- գաւաթ մը, շիշ մը, լաթակալ մը (լաթերը շուանի վրայ հաստատելու բռնիչ), ելակ, մատիտ, անգլերէնով (V) գիրը, ներկի տուփ, աղջկայ մը դէմքը եւ թիւ 7:

Գտի՛ր եւ ներկէ՛ պանոնք:



Գայլիկ Ըլլալ Գայլիկ...

Գայլիկ ըլլալ գայլիկ,
Ասկէ աղուոր ի՞նչ կայ:
Գայլիկ ըլլալ գայլիկ,
Ասկէ աղուոր բան չկայ:

Գայլիկ, գայլիկ ասկէ աղուոր ի՞նչ կայ.
Գայլիկ, գայլիկ ասկէ աղուոր բան չկայ:

Գայ- լիկ ըլ- լալ գայ- լիկ աս- կից աղ- լոր ինչ կայ,
գայ- լիկ ըլ- լալ գայ- լիկ աս- կից աղ-լոր բան չը-կայ գայ-
լիկ գայ- լիկ աս- կից աղ- լոր բան չը- կայ գայ-
լիկ գայ- լիկ աս- կից աղ- լոր բան չը- կայ
գայ-լի-կը մեծ գայլը մը- սիկ կ'ընէ թայց գայլիկը ինք զինքը մը-
սիկ չ'ը - ներ:

Թուական




Արեւլայի ստորագրութիւն



19.- ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Փորձէ՛ գնդակը նետել



◆ Քայել չորս ոտքով



◆ Գորտի պես
ցատկել



◆ Գլխու
վրայ
դառնալ

ԿԱՆՉ

Մենք Գալիկներ

Մենք գալիկներ Հ.Մ.Ը.Մ.ի

Անվեհեր, առաքինի,

Ուրախ, զուարթ, մենք ձեռք-ձեռքի,

Պար մը բռնենք հեշտալի:

(Կրկնել)

Մենք գալ - լիկ - ներ շ, Մ, Ը, Մ-ի աՆ - վե - ներ ա -
ռա - քի - նի ու - թա՛ զը - լարթ մենք ձեռք ձեռ-քի
պար կը բռո-նենք հեշ-տա - լի ու - թա՛ զը - լարթ
մենք ձեռք ձեռ - քի պար կը բռո-նենք հեշ - տա - լի:

Թուական



Արեւլայի ստորագրութիւն



20.- ՓՈՂԿԱՊ ԿԱՊԵԼ

Փողկապը կը տրուի Գայլիկին, երբ իր խոստումը կու տայ: Փողկապը երբեք չհանել վիզէն, հոս, հոն չձգել, ունենալ միշտ վիզին վրայ մաքուր եւ կոկիկ:

Քու տարիքիդ Գայլիկ մը անպայման կ'ուզէ որ ինքզինքին հոգ տանի, կ'ուզէ փողկապը կապել առանց ծնողքին օգնութեան, եթէ նկարին հետեւիս եւ Աքելլային բացատրութիւնները մտիկ ընես, շուտով պիտի կարենաս փողկապդ առանձին կապել:





Այս բոլոր առարկաները իրարու հետ կապ ունին, բացի մեկէն: Գտիր այդ առարկան:

Փորձէ
նոյնը
գծել



Թուական



Արեւլայի ստորագրութիւն

